ճարտարապետորեն ոչ մի կապակցություն չունեցող, նույնիսկ նրանց շեշտակի հակասող։ Բայց և խաչն էլ հանդիսանում էր ֆալլոսի սիմբոլ։ Վանահոր տանիքը բարձրացողը կարող է ձեռքով բռթել այդ սյունը, ապա նա ճոճվում է։ Այդ շարժման կառուցողական գաղտնիքը ճարտարապետների կողմից առայժմ վերջնականապես չէ պարզված։ Սակայն հազիվ թե կարելի լինի սոսկ ենթադրություն համարել այն իմ բացատրությունը, որ սյունը մի ֆալլոս է[73], որն իր շարժումով ըստ ամենայնի ձգտում է նմանվել իրականին։ Այդտեղ ևս չբեր կանայք մոմեր էին կպցնում և աղոթում զավակ ունենալու հույսով։ Սյունը կոչվում է զավազան։ Այդ բառը պետք է հասկանալ ոչ թե ձեռնափայտի իմաստով, այլ այնպես, ինչպես հասկացվում է, օրինակ՝ Ղազախում, որտեղ այդ անունով կոչվում է նաև առնանդամը։ Ղազախում մի ահագին ժայռ ֆալլոսանման տաշված իր գագաթին կրում է u. Սարգսի ուխտատեղին և կոչվում է նաև Գավարզի, որը տեղացիք համարում են զավազան բառի աղավաղում։ Տաթևի սյունի կառուցումը Սիսական նահանգի պատմագիր Ստեփանոս Օրբելյանը[74] վերագրում է Սյունիքի Հովհաննես երկրորդ Արքայակերպ կոչված եպիսկոպոսին և ետ է տանում մինչև 895—906 թթ.։ Ջնայելով, որ այդ եպիսկոպոսն զբաղված էր դլխավոր տաճարի կառուցումով, որը պահանջում էր լարված ուշադրություն և ահագին ծախսեր, նա միաժամանակ «կանգնէ եւ մերձ եկեղեցւոյն հանդէպ դրանն հարաւոյ սիւն մի զարմանալի յանուն սրբոյ Երրորդութեանն ի մանր քարանց պատուաձեալ ի չափ 30 կանգնոյ»[75]։ Սա ապացույց է, թե այդ սյունի կառուցումը նրա համար նույնչափ կարևոր էր, որչափ և տաճարի կառուցումը, մյուս կողմից և ապացույց է, որ այդ կարևորությունը բխում էր հնուց այս վայրում նման հին սրբության առկայությունից։ Առաջ քան Տաթևը վերածվեց քրիստոնեական սրբավայրի, որի հրաշագործ զորությունը հիմնված էր այստեղ հավաքված մասունքների և Քրիստոսի խաչափայտի մի կտորի վրա, այս վայրը անշուշտ ժողովրդի համար պիտի նվիրական եղած լիներ որպես ֆալլոսի պաշտամունքի վայր։

Գուցե միաժամանակ, նույնպես նվիրական է եղել հեթանոս հայի համար

---

[73] Հմմտ. Лукиан, Соч. Academia, М. Л., 1935 г.. т. II, О сирийской богине, էջ 267։ Այնտեղ պատմվում է, որ Սիրիայի Հիերապոլիս քաղաքի Հերա աստվածուհու մեհյանին կից կային Դիոնիս աստծո կողմից կանգնեցրած մոտ 56 մետր բարձրություն ունեցող երկու ֆալլոսներ հետևյալ մակագրությամբ՝ «Ես—Դիոնիսոս նվիրաբերեցի այս ֆալլոսները խորթ մորս՝ Հերային»։ Այդ ֆալլոսների վրա տեղավորվում էին տղամարդկանց փոքրիկ արձանիկներ մեծ ֆալլոսներով։ Արձանիկները նվիրաբերում էին այն ուխտավորները, որոնք ի պատիվ Ատտիս աստծո, նրա նման իրենք իրենց կոտրում էին այդ մեհյանը շրջապատող բակի ներսում։ Թե՛ այդ արձանիկներին և թե՛ Դիոնիսի կողմից կանգնեցրած մեծ ֆալլոսներին քաջ ծանոթ էին և մեր հայ նախնիքները, քանի որ նրանք որպես ուխտավորներ մասնակցում էին Հիերապոլիսում Հերա աստվածուհուն նվիրված տոնախմբություններին և ծիսակատարություններին։ Նույն տեղում պատմվում է (էջ 277), որ հայերն էլ եգիպտացիների, հնդիկների, եթովպացիների, մարերի, բաբելոնացիների հետ համատեղ նվիրում էին թանկագին ակեր Հերայի արձանի համար։ Այդպիսով, հայերին քաջ ծանոթ էր ոչ միայն իրենց տեղական ազգային ֆալլոսի պաշտամունքը, այլև սիրիացիների միանման պաշտամունքը, որին նրանք մասնակցում էին։ Ուրեմն նրանք քաջ ծանոթ էին և մեծ ֆալլոսներով փոքրիկ արձանիկներին։ Չի բացառվում, այդպիսով, որ Զանգեզուրի Արծվանիկ գյուղում, ինչպես նաև Սարիղամիշում, Անիում և Սիսիանում գտնված մեծ ֆալլոսով փոքրիկ արձանիկները աղերս ունենային վերը նշած նույնանման պաշտամունքային երևույթների հետ, հին հայերի կամ նրանց նախնիքների միջավայրում։

Համեմատենք նաև նախնական հասարակության տոտեմական սյուների՝ ֆալլոսների պաշտամունքի հետ։

[74] Օրբելեան Ստ., Անդ., գլ. ԽԱ, էջ 225։

[75] Նույն տեղում։